



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

ստանձնել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով  
մեղադրել կամ օգտագործել առկա նյութը՝ անդեղելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20 ֆեբ

ԱԼ. ՄԱՐՏՈՒՆԻ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ



891.99.092 [Pm Smelyanin]

Ա


Ա. ՄԱՐՏՈՒՆԻ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

ՄՏԵՂԵԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ


A<sup>II</sup>  
29632



Թ Ի Ֆ Լ Ի Ս

5-րդ քաղաքացիական պատերազմի ժամանակ, 1916 թ. հունիսի 15, № 3.

1 9 2 3



## 2. ԹՈՒՄԵՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒ- ԹՅԱՆ ՍՈՅԻՆԱԿԱՆ ՆՐՈՒՅԷ

(Ս ո ջ ի ու լ ո գ ի ա կ ա ն ա կ ն ա ռ կ)

Բանաստեղծությունն ինքնին հասարակական մեծություն է։ Նա սերտ կերպով կապված է ժամանակի ու տեղի հետ։ Բանաստեղծ Թումանյանը լինելով 80-ական թվականների հայ իրականության ծնունդ՝ իր վրա կրում է այդ և հետագա տարիների կնիքը։

80-ական թվականները հայ կյանքի համար անցողիկ շրջան կարելի է համարել։ Շատ հոյսեր, և ամենից առաջ տաճկահայերի ազատագրության խնդիրը, ի դերն չեղան։ Կտրած տաշտակը հրապարակի վրա և, վերի գլխին մարդիկ լողիտ են միայն։ Լացը նրանց համակում է ամբողջապես։ Ինչ հարց էլ վոր լինի, ինչ մոտիվ էլ վոր լինի — նրանք ներկում են հոռետեսության գույնով։ Հոռետեսությունը հասարակական յերևույթ է, ուստի նա ունի իր հասարակական բացատրությունը։

Անցնենք նրան։



Թումանյանն անհուսալի հոռետես է, բայց վաղ եպիկ գրողի դերում։ Քրքրեցեք նրա յերկերի սկզբնական մասը, մոտ 50 վտանավոր, և դուք կր տեսնեք, վոր նրանք ամբողջապես համակված են հոռետեսությամբ ու մոայլաբանադրությամբ։

Իր «Նախերգանք»-ում բանաստեղծը լեռներին մոռե-նում է վաղ թե սովորական ձևով, այլ «զատն հեծության հուռաչանքներով»։ Դիմելով հին սերնդին՝ նա նրան խոս-

տանում ե կտակել մի բան միայն. «ապրեք, յերեւելք, բայց մեզ պես չապրեք», փորձենաւ իրականությունը դառն եւ Բանաստեղծը տիրում ե, փոր «կորել են իր հուշերը, ե նա կսկիծն ե լալիս»: Նրա համար իր փողջ կյանքը մի «տրտունջ» եւ Որերը նրա համար միշտ եւ «վատ» են: Բանաստեղծի «սիրտը բռնած են զեռ հուր հառաչանք, սե գիշեր»: Կամ թե չե կարգացեք հետեյալ տողերը.

Յեզ մենք խորատկված մեր կեանքի ծեղից,

Անուշ ու գարուկ, ճակատներս ցած,

Ընկնում ե քնար մեր մտառդ ձեռքից,

Ընկնում են սրտից ե յերգ, ե աստված:

Յեզ այսպես շարունակ, անվերջ, բանաստեղծը լալիս ե դառնազին:

Այդ կնիքն ե կրում նայեզ բանաստեղծի յերգած ազգային մտախփը:

Թումանյանը նացիոնալիստ ե նացիոնալիզմը այն ժամանակվա նորածին, կենսունակ ու զարգացող մտախփն եր: Նայենք 80-ական թվականների վերջերի ե 90-ականի հայ իրականութեան: Մի ցիրուցան եղած ու ենթակա ժողովուրդ: Նրա խոշոր հաստիքի գլխին կախված ե «Տաճկահայ դատ» կոչվածը: Մյուս խոշոր մասն ել ուրախ բան չի տեսել: Հասարակական շերտավորումը տակալին թույլ ե Պրոլետարիատ չկա: Այդ բացակայությունը ավելի ես ուժեղացնում եր այն ժամանակվա իդեոլոգի ազգային դիրքերը:

Բանաստեղծի ազգային երգերը համակված են նրա լայկանությամբ ու պետիմիզմով. ե նրա այդ երգերը պատմիզ են, թմբած, զուրկ վերեւ իրոխատությունից: Համեմատեցեք այն հայ ազգայնական բանաստեղծության խոշորագույն ներկայացուցիչ՝ Ռ. Պատկանյանի փոստամպորներէ հետ: Վերջինս ունի զրելու ասույգ ու ժիր ձեւ Տմբ խորխտ ե ու համարձակ: Վոդին մարտական: Յեզ դա հառ-

ժանապի ե: Գամառ-Քաթիպան ազրում եր հայկական հար-  
ցի մեղրամսի շրջանում: Անվերջ ծրագրներ ու մեծա-  
մեծ հույսեր: Ազգային շարժման երիտասարդ հասակն եր՝  
փոքերով, տարփող, ամենայն ինչ իդեալականացնող: Յեվ  
յեթե նրա ճանապարհին խոչընդոտներ եին առաջ գալիս,  
երիտասարդական կորովով լի ազգային երգիչը անվախ  
գոչում եր.

Ապերտիսա Յեվրոպ, հիշե հայերուն,  
Դու շատ մի խարվիլ սուրի շաշյունէ.  
Արշուն փոթեցն չէ առաքինություն  
Յեվ ոչ նա ազատ փոզու նշան է:

Անցավ յերիտասարդ շրջանը: Շատ նիգակներ կուրը-  
վեցին: Կյանքը ցույց տվեց, փոր այնքան ել հուսովի չե  
այն ապագան, փորի հեռ այնքան հույսեր եին կապված:  
Հաջորդ սերունդը զգաստացավ, մեղմացավ ու թուլացավ:  
Աշակերտները՝ հասակով տակավին յերիտասարդ, ա-  
վելի ծեր եին, քան թե նրանց ծերացած ուսուցիչները:  
Իսկ մեր բանաստեղծը հին շկոլայից եր գալիս: Նա կազ-  
մում եր հնի ու ևուրազայն Եղանների միջեվ ընկած ո-  
ղակը: Այն ժամանակ, յերբ Պատկանյան գայրույթ ու  
փրեժ եր ժայթքում, յերիտասարդ Թումանյանը մեղմորեն  
շնչում եր՝

Մեր ճամբեն խավար, մեր ճամբեն գիշեր.  
Կամ թե չե՝

Հայի գիշեր, հայի գիշեր,  
Յավի անդունդ անհասակ...

Բանաստեղծի 1903 թվականին հրատարակած հատորն  
ախտվում ե «Նախերգանք»-ով, փորի մի տունը այսպես է.

— Ո՛վ, փոր կանչում ես գիշեր ու ցերեկ  
Հազար ցավերով, հազար ձևերով,  
Վաղերության հրգող թևերով  
Քեզ մոտ եմ գալիս, հայրենիք իմ հեր:

Թումանյանը մի ամբողջ տետրակ ունի «Հայրենիքի»

հետք խորագրով, հրատարակված 1916 թվականին: Թվում է, թե բանաստեղծի ազգայնականությունը վերջին ժամանակները եզրույցիայի ենթարկված պետք է լինե՞ր, այն էլ ղեպի լավը, զրականը. ուրիշ խոսքով՝ Թուամայանը կարող էր դառնալ աշխատեալ կոչված՝ լավ պատրիտ: Թերևս այդ խորհրդակցությունը անե՞լ և տալիս նրա շէին կոմիւնիստ: Ահա մի նմուշ.

Հէյ, գալիս ենք, ո՞վ տանջվածներ,

Գալիս ենք մենք զինավառ,

Յե՛վ ազատ որ, և կյանք, և սեր

Վաղջ բերում ենք ձեզ համար:

Սակայն ոչ: Չնայած այն հանգամանքին, որ զրբույկի մեծ մասը վերաբերում է 1915 և 1916 թվականներին, նվիրված ազգային մոտիվներին, նա ամբողջապես տարված է նացիոնալիզմով: Նույնիսկ գաղնակցական խմբապետությունն է, որ երգվում է այնտեղ, խմբապետությունը՝ 1915 թվին կապված սուսական տապալապետությունների հետ:

Խմբապետ, տառա, բնիկ խմբապետ,

Աչքս չի կարում վորտեղից մինչ ուր՝

Շարժվում է, ահա, հյուսիսն ընդհանուր.

Հորձանք և տալիս ծովն բուսական,

Հորձանք և տալիս ծանր ու տհաժոր,

Դեպի ամեն կողմ—տիներն հեռավոր.

Թուամայանը ազգերի համերաշխություն և կոմկոմիսիոնազգային խաղաղություն գաղափարի պաշտպանի համբալն և ունեցել: Փոնե իր կյանքի վերջին տարիներում: Իսկ իր երկերում նա եղել է ևսացիոնալիստ:

Նացիոնալիզմը բուրժուական կարգերի արտադրությունն է: Նրա ճանապարհը արշա՞ն ու արտատուրի ճանապարհն է: Մենք ականատես ենք եղել և ենք ազգերի և ազգային պետությունների խաշոր ընդհարումների զենք:

ու գրաճի շաշյունին միանում է մի այլ աղմուկ՝ ծխացող ու միացող աների ու շենքերի միացորդները շիջուցանվում են մի «եժան» նյութով. դա իր արժեքը կորցրած մարդկային արյունն է. դա իր աշխատանքից ու բնատնիքից խլված քրանաջան բանվորի կյանքի գինն է, վոր արբազործվում է հանուն նացիստալիզմի կամ ազգային տիրապետութեան, հողուտ օղորի յերջանիկների կամ սիրող դատակարգի:

Ազգի ներսում նացիստալիզմը խրախճանքի պար է բռնում՝ ծառայելով ժողովրդական մատասների քնացման միջոց, իսկ տիրողների համար վերսպես ժողովրդական ավերածութեանների ու սրածութեանների գործիք: Ո՛վ կարող է ուրանալ այս. այլապես հասարակական շարիքները պետք է բացառելով բնական կամ թեոլոգիական պատճառներով. սակայն միջնադարի փորձերից հետո դա անհնար է դասել: Կարևոր է բաց անել նացիստալիզմի այլանդակ գեմբը, ցույց տալ, վոր «կարիքների» վերացումը և «բարիքների» գրավումը կյանքում հնարավոր է վաղ թե նացիստալիզմի միջոցով, այլ ժողովուրդների շինարար աշխատանքի շնորհիվ, մարդկանց համագործակցութեամբ՝ ընդդէմ բռնութեան, ճնշման ու կեղեքման: Այդ է մեզ պետք: Յեւ գրա համար է, վոր այս խնդրի վրա մենք մի փոքր ծանրացանք:

Ըստ երևույթին մեր բանաստեղծը իր կյանքի վերջին որերում կանգնած էր հարցի այս տեսակ ըմբռնման ճանապարհի վրա: Դա էր պատճառը, վոր նա միայ խորհրդային Կովկասում, ծառայեց խորհրդային կարգերին. և հասկանալի է, թե ինչո՞ւ նրա մի ժամանակ երգած դաշնակցական խմբապետները նրան իրենց հակառակորդը հայտարարեցին: Սակայն գրականութեան պատմութեան իսկութեանը պահպանելու համար անհրաժեշտ էր ընդդէմ Թուամսյանի երկերի մի մասի ազգայնական բնույթը:

Այդ գիծը պատահական չէ թուամայանի համար: Բանաստեղծը իր ժամանակի արտահայտիչն է: Թուամայանը կրկն իր վրա կնիքը այն հայ դարաշրջանի, յերբ տեղի եր ունենում նահապետականության փոխանցումը բուրժուական կարգերին: Նա ծնվեց ու աճեց առաջինը, բայց և հաղորդակից դարձավ երկրորդին: Հովհաննես Թուամայանին, փորպես խոշորագույն հայ բանաստեղծի, շունչ տվողը եղել է հայ գյուղը: Նրա ույժը և մեծ թափը հենց սրանումն է: Սակայն Թուամայանը արտահայտել է և այն, վեր մյուս կողմից հատուկ է եղել նրա եզոխային: Մեր բանաստեղծը պատկանում է Հովհ. Հովհաննիսյանի և Ալ. Օստուրյանի գրական շրջանին: Շատ մասերում նա իր հասարակական բնույթով հարազատում է մեր այդ յերկու գրողներին: Սրանից դեռ 10 — 11 տարի առաջ վերջիններիս տողերիս գրողը փորակել է փորպես մանր բուրժուական-գեմեկրատիկ բանաստեղծներ:

Յեւ իսկապես XIX դարի վերջը հայկական մանր-բուրժուականության շրջանն է, ասենք՝ հայ իրականությանը կապիտալիզմի որով միշտ ել մանր-բուրժուական, քաղբենական է եղել: Մեղանիզմը կամ քաղբենականությանը դա մանր-բուրժուական իդեոլոգիան է իր լայն իմաստով: Մանր բուրժուական, մանր սեփականատիրոջ, արհեստավորի, մանրավաճառի և մասսայական ինտելիգենցիայի (վարժապետ, գրող, շինովնիկ) գումարը, վոր հայ իրականության մեջ գերիշխող է, ստեղծել է իր իդեոլոգիան. դա մանր-մարդու, պանդանոզականի, յերեբ-վողի պաշտաբարականությանն է, վոր գանձում է խոշոր-բուրժուական և պրոլետարական ուղիների միջև: Նա շարունակ տարուրերվում է. առաջը չի նայում, անիծում է ներկան, իդեալականացնում է անցեալը, փարվում է իր քայքայվող գրույթյան: Նա վախում է կատաստրոֆներից, վոստյուններից, միտրից. իր ականջները խցում է հոսող ու առաջ գնացող իրականության գիմաց: Այդպես է յե-

դել հայ ղերիշխող իղեոյողիան: Անշուշտ, մեր կյանքում տան և տվել և աշտոկա կոչված հայ լիբերալիզմը՝ խոշոր բուրժուազիայի մտավոր ազենաութան, սակայն ինքը հայ լիբերալիզմը միանգամայն համակված և եղել մեշշանա-կանությամբ:

«Հայ խոշոր բուրժուազիան, գրել եմ ես 1912 թ. («Գարուն» ամսանախի երրորդ գրքում, էջ 232), միշտ եղել և վոշ աշնքան ումեղ. իրականության գույն տվողը «մանր ժողովուրդն» և եղել, շարժումների կորիզը նա և կազմել: Հայ ինտելլիգենցիան ամբողջապես դուրս և եկել ղեմոկրատիայի ծոցից, վորի իղեոյողիան նրա վրա խոր կնիք և թողել: Իսկ լիբերալ ինտելլիգենցիան աւելի շուտ մանր-բուրժուական է, քան խոշոր բուրժուական: Յեւ ինչպէս կարող և քաղաքացին մանր-բուրժուազիայի, գյուղացության և առհասարակ ղեմոկրատիկ տարրերի գա-վակ ինտելլիգենցիան, թեկուզ լիբերալ, հետու մնալ իր ծնողից: Հայերի մեջ չի եղել հողատիրական դաս, իղեոյողիաները նրանից սզտվել չեին կարող, իսկ թուլակազմ խոշոր բուրժուազիայի կրթությունն ստացած գաւակը եր-բեք ել չի հանդիսացել իր դասակարգի գաղափարախոսը. ի ղեւ ստած, այդ տեսակետից Գր. Արծրունին թեե բա-ցաություն և կազմում: Մրտեղից եր ղեկավարներ ճա-րելու հայ մտաւորականությունը, եթե վոշ ղեմոկրատիայի շարքերից: Յեւ մենք տեսում ենք քաղցած հայ վարժա-պետին՝ լրագրողի կամ հասարակական գործչի ղերում, քաղքենի բնատնիքի գաւակին՝ իր բանաստեղծական կամ հրապարակախոս գրիչը ձեռքին: Այդպէս չե ուրիշ իրա-կանությունների մեջ, որինակ, հենց ուստական իրակա-նությունը, որտեղ միմիայն հողի և տուտրի ներկայա-ցուցիչները գիտնականների, գրական գործիչների կամ ղեկարվեստաղեանների նկատելի տուկոս են դուրս բերում իրանց շարքերից: Հարկաւ, հայ կեանքը մեր բնղգծած պատկերը ունենալով, չպետք և կարողանար արտահայ-

տել քիչ թե շատ ինքնուրույն լիբերալ հոսանք. վերջինս խիստ կերպով կրեյտւ էր իր վրա մանր-բուրժուական ուղղութեան կնիքը, մի ուղղութեան, որ ժամանակի ընթացքում ավելի ակրատիկապէս հանդիսացաւ և այսօր տակաւին ամենատեղեղն և հաշվում է:

Հայ հասարակական կյանքի բնութեան տեսակետից սա մի հետաքրքիր խնդիր է: Հայ ազգասերները միշտ եւ զանգատով եւ, թե հայկական կուլտուրան թույլ է, և դրա պատճառը բուրժուական հրապարակախօսը համարել և ազգասիրութեան պակասը կամ բացակայութեանը հայերի մօտ: Մասերիալիստական տեսակետն ընդունողների համար այդ երեսօյթի բացատրութեանը հեշտ և զանեղ Գննեցեք մեր իրականութեան նշութեան հիմքերը և կը գտնեք դրա պատճառները: Այդ մասին առհարկի երկու խոսք:

Հայկական կապիտալը հովկասում ամենատեղեղն և եղել էր այց նա եղել և ոտաք կապիտալ՝ սուսական կապիտալի մասը, փոքր հայ կեանքի հետ, այսպէս ասած, որդանական կապ չի ունեցել: Մինչդեռ յուրաքանչյուր ազգային կուլտուրա սնվում ու զարգանում է իր նշութեան հիմքերով: Բուրժուակապի ազգային կուլտուրան կախում է կապիտալին: Այս կողմից հայ կյանքը մի քիչ տարբեր կերպարանք է ունեցել: Հայ բուրժուական կուլտուրան բաժանունն սնանկ է, ազգատ և ճապաղ, մեղափոքը հայկական կապիտալի ուրույն դերը հովկասում է հայ ազգաբնակչութեան ցրվածութեանն և: Այդ իսկ պատճառով էլ հայ լիբերալիզմը յեղել է թույլ և յերերուն: Հայ կուլտուրային ավելի շուտ կոռուչել է վարժապետական ինտելլիգենցիան, կոռուչել է մանր բուրժուակապին: Հայ լիբերալիզմը շաղախված է մանր-բյուրգերական իդեոլոգիայով: Հայ իրականութեանը՝ դա ինքը մեղանականութեանն է: Հայ քաղքենիութեան զաւակներն են բանատեղծներ Ն. Հովհաննիսյան և Ա. Մատուրյան. նրանց

գրական հասակակիցը՝ Հ. Թումանյանը անհրաժեշտորեն իր հարկն է տվել նույն այդ մեղշանականության բառի հասարակագիտական իմաստով:

Այս կողմից բնորոշ է մեր բանաստեղծի կրոնականությունը, վոր յատուկ է բոլոր հայ՝ բուրժուական, ազգային-գեմոկրատիք գրողներին: Տիրացուականությունը հայ գրականության ծանոթ մտախմբներից մեկն է եղել:

Կրոնը գործիք է, բայց նա և պաշտամունք է: Կրոնասեր են ամենից առաջ այն տարրերը, վոր հաժաաացող չեն, վորովհետեւ կրոնը նրանց ձեռքին մի գործիք է: Միջին դարերում ամենասարսափելի ճնշումներն ու բանականությունները, ամենաքսամեկի բարթեւդիմեսոյան գիշերները կատարվում էին կաթոլիկ հոգեւորականության և «հալատացյալ» ավատական դասի ձեռներով: Կաթոլիկության ու բողոքականության, իմա՝ ավատականութեան ու կապիտալիզմի կոխը որբադործված եր խաչով: Բուրժուազիայի անբաղկատուության որով դասակարգային շահագործումը և ազգահալած քաղաքականությունը առաջ է տարվում նույն խաչի ու յժով և այդ խաչը իր ձեռքում պահող փարաշավորի ողնությամբ: Սա կրոնն է: Բայց կրոնն բնորոշվում է և ժողովրդական տարրերի կողմից, բայց վոչ վորպես ճանաչված և բմբնված երևույթ, այլ վորպես մի ֆեախշ, անբացատրելի հմայք ու պաշտամունք, և այս զեպքում նա հեշտությամբ գործիք է դառնում բուրժուական անբաղկատուների ձեռքում: Կրոնական ֆեախշիզմով տարվողը ամենից առաջ մանր-բուրժուազիան է, հասկանալու է և բոս ինքյան, վոր մեղշանական իդեոլոգիան ու նրա գաղափարախոսները չեն կարող հեռու մնալ կրոնից, նրա ֆեախշիզմից:

Դեռ 1898 թ. Թումանյանը իր «Տրամության սողմունքներից»-ում քաղել է.

Միթե, Աստված, զեռ բախական չտեսար  
Եւրան ավեր, վիշտ ու ցավեր, հեծություն,

Միթէ, Աստված, հաճելի չեն քեզ համար  
Ազոթք ու սեր, կյանք ու տաղեր զվարթուն:

Այնուհետեւ նա ափել է մի շարք տաղեր ու մոտիվներ՝  
պարուրված կրօնական շղարշով:

Բայց ծածկում է գեմքը Աստված՝

Հայից դարձած ու խոսով,

և այլն: Իհարկե, կրօնը մեր բանաստեղծի բնորոշ կողմը  
չէ, բայց նա Թումանյանի երկերի մանր-բուրժուական ե-  
րանգի մի արտահայտիչն է:

Մի այլ արտահայտությունն է նաև Հովաննիսյանի ու  
Մատուրյանի՝ Թումանյանի ուշադրությունն և դրավել և  
վաշխառությունը, վոր հայ կյանքում խոշոր երևույթ է:

Գյուղը իր նահապետական դրությունից դուրս գալու  
հանապարհի վրա է: Առևարական կապիտալը թեև տա-  
կավին մուտք չի գործել, թեև բուրժուական անասու-  
թյուն չկա, սակայն գյուղացուն, մանր սեփականատիրոջը  
միջոցներ են պետք, վորովհետև քաղաքն սկսում է ազդել  
գյուղի վրա, վերջինս հասարակական շերտավորման հոտն  
է առնում: Գյուղացին ունի կարիքներ, և նա գիմում է  
իր բնակավայրի «բանկիրին» — վաշխառուին: Առաջ է գա-  
լիս պատմություն և բոլոր ժողովուրդների կյանքում հայանի  
երևույթ: «Մանր մարդը» վաշխառուից խոշոր տոկոսներով  
փող և վերցնում և ապա անքում է նրանց ծանրության  
հներքո. նա ափելի քարուքանդ է լինում. վաշխառությունը  
դառնում է մի կատարյալ պատուհառ:

Տակավին հին դարում Արխատուկը բացասաբար էր  
վերաբերվում վաշխառության, առարկելով, թե «գողը  
փող չի կարող ծնել», իսկ Կատոն Ավագը վաշխառուին  
համեմատում էր մարդասպանի հետ: Միջին դարերում  
քրիստոնեական վարդապետությունը, գլխավորապես հան-  
ձինս Թովմաս Ակփինացու, դառնում էր, վոր մարդը պետք  
է աշխատի. աշխատանք և ողբատներին բարեբարել — այս

ե լրատ քրիստոնեության միակ արժանի անտեսական  
կյանքը. բացի այդ՝ չէ՞ որ Ղուկաս առաքեալը ասել է՝  
«յեւ տուք փոխ՝ ուստի վոչ սկին ունիցիք առնուիւ» Այ-  
նուհետեւ, ցտկոսները վնասում, անբարոյականացնում են  
և մեղապարտ են դարձնում մարդուն։ Այդ ամեն պատ-  
ճառներով վաշխառությունը պետք է դատապարտվի։ Այդ-  
պիսով թե՛ աստվածաբանությունը, թե՛ եկեղեցական իրա-  
վունքը, թե՛ եկեղեցական ժողովները, ինչպե՛ս Կղեմես Վ  
պապի որով զուժարկած 1311 թ. Վիեննայի ժողովը, և  
թե՛ Թովմաս Ակրիկնացին ու Հյուրանիմը մի շարք միջոց-  
ներով հայածում ու արգելում եին վաշխառությունը։ Այս-  
տեղից նա անցավ նոր ժամանակներին և նրանց իդեա-  
լիսա՝ բառի վոչ զորձնական իմաստով—իդեոլոգներին։  
Վերեի ակնարկներով մենք ուզում ենք ցույց տալ այդ  
իդեոլոգների միտաֆիզիքական մտածելակերպը և թե՛ այն,  
վոր նրանք խոսելով—այն ել զուտ վերացական բարոյա-  
խոսական տեսակետից—վաշխառության դեմ տիրող հա-  
տարակական կարգերին, վորոնց հիմքից և բղխում վաշ-  
խառությունը, չեին ել մոտենում սկզբունքորեն, գիտա-  
կանորեն։ Նույնը և բուրժուական զրականությունը, գրա-  
կանության պատմությունը։ Նամանավանդ հայ քաղքե-  
նական իրականության ծոցում։ Հայանի ե Փր. Արծրունու  
տեսակետը՝ թե՛ վաշխառունները պատիվ չեն անում հա-  
յությանը։ Ինչպե՛ս Վորովհետեւ հայ բուրժուական իդեո-  
լոգին պետք եր մի կերպ քնացնել հենց այն ստարադդի  
տարրերի գիտակցությունը, վորոնք (վրացական հոգա-  
տերները) նամանապես սկսել եին ճաշակել հայ վաշխառուի  
բեռան ծանրությունը, կապիտալի այդ նախախուզարկուի  
հասցրած վերքերի «քաղցրությունը»։

Թումանյանն ել է զգում վաշխառութեան անհրա-  
պուրչությունը.

Պարտքատերը զանգատ դնաց,  
Քեոխվեն կգա, կծեծի.

Թեև նա աշատեղ չի բարոյախոսում, թեև նա գտնում է, վոր վաշխառուն գյուղացու տղուկն է, թեև նա վաշխառուի կողքին է դատում և նրա հագեոր եղբորը՝

Տերտերն որհնեց, անվարձ մնաց,

Կբարկանա, կանիծի

Թեև վաշխառության շրջանակները նա լայնացնում է և իրավամբ վաշխառություն և համարում և հին հարկային սխառմը՝

Են որն Եկան թովջի արին,

Հարկ են ուզում տերության.

Ի՞նչ տամ կռին ու բեղեառին...

Թեև, հանդեպ վաշխառության վաղ թե նրա համար, վոր նա անտեսական կյանքի քայքայումն է, այլ գյուղացու շահագործում՝ նրա համակրանքը աշխատավոր գյուղացության կողմն է, այնուամենայնիվ բանաստեղծը հարկավոր եղբակացությունը չի անում, որովհետև նա անկարող է այդ անել չնորհիվ քաղբենական այն կապերի, վոր կաշկանդում են նրան։

Վաշխառությունը կտոր է զցում և վաճառականին։ Թումանյանն իր լավագույն երկերից մեկը՝ «Անբախտ վաճառականներ» նվիրել է այս թեմային։ Նրա համար վաշխառությունը այն աստիճանի հասարակական անհրապույր երևույթ է, վոր սա հավատարմապես խփում է և՛ աղքատին, և՛ հարստին, և՛ աշխատավորին, և՛ վաճառականին։ Այդ իսկ պատճառով բանաստեղծը վաշխառուն իր այս զրվածքում ծաղրի սուարկ էլ է դարձնում։ Վաշխառուն գանդառավում է վաճառականից.

Ախպեր, Եսպես բան եք տեսել.

Ոսկի տայ մարդ իրենն ձեռքով,

Չկարենա առնել զոսով...

Սրանից յետոյ դե արի դու

Ու ձեռ մեկնիր աղքատ մարդու։

Այստեղից մինչև մանր-բուրժուական անգոր և անա-  
տամ բարոյականությանն ու փիլիսոփայությունը մի  
բայլ և միայն. և թումանյանն անուամբ և այդ բայլը: Ահա  
ներա «Պոեան ու Մուսան»: Կյանքից անբավական հայ բու-  
նաստեղծի մտորումներն ու արտունջն է, վեր ապրիս և  
թումանյանը իր այս ձգձգված զբաղմբում, վերը թերեւ  
համանություն է. հիասթափված բանաստեղծը գտնում է՝

Փողի քանկը, փողի քանկը,  
Բարձրացնում է մարդու հասակը,  
Գեղեցկացնում է հրեշ աղեկին,  
Սրբազործում է զարշն ու աղանդին  
Նրա ույժն է՝ վեր զարձնում է լոկ  
Անասուններին հարզի ու խելոք,  
Կույսին, գառամին մտեցնում իրար,  
Զարին, վաշխառուն շինում բարեբար,  
Պճնում ճակատը լիրբ ավազակի,  
Կանգնեցնում արձան անխաճան փառքի:

Այժմ թումանյանի ինքնահասուկ փիլիսոփայության  
մասին: Հայ բանաստեղծներն առհասարակ սիրել են բա-  
րոյախոսել, նրանց երկերում դուք հաճախ կը հանդիպեք  
մեծազորոյ, այսպես ասած՝ համազարգի, ընդհանուր  
ֆրազաների: Քաղբենին, այն էլ սեմենարիզմի շկոյան  
անցկացած քաղբենին շատ է սիրում մեծ-մեծ բրդել,  
«խորհել» ու ծակ փիլիսոփայությամբ զբաղվել: Ավ. Իսա-  
հակյանն ասել է.

Անհայտ, անորոշ, անձև տենչերով  
Զգտում է հողիս հեռու, շատ հեռու.

Յեւ ինչպես երազ — է կա, և չկա .

Հիշենք Հ. Հովհաննիսյանին՝

Միայն այն կապրի՝ վեր միշտ է անմահ—

Սուրբ գեղեցկություն և սուրբ գաղափար.

կամ թե չէ Ալ. Մատուռյանին՝

Եւ պիտի երգեմ անկաշառ ձայնով,  
Սուրբ ճշմարտութեան դրոշակը ձեռքիս:

Այստեղ կայ ամենայն ինչ՝ անհայտութեան, անմահութեան, զեղեցկութեան, ճշմարտութեան, բայց և չկայ վոչինչ. այս ամենը խեղապես վոր շատ անորոշ և ու անձեւ, վորովհետեւ ինքը մանր բուրժուան անկերպարան և, հեղհեղուկ ու տարաբերվող: Այս բանում հետ չի մտում և թումանյանը: «Պոեան ու Մուսան» վտանաւորում նա ասում և.

Եւ գոչեցի. — խափար ամբոխ,  
Պաշտում ես դու լոկ փայլ ու փող,

Ե՛ս, երկնքի քնքույշ վորդին,  
Երգում եմ սէր, ճշմարտութեան ..

Սա շատ ու շատ նման է Իսահակյանին, Հովհաննիսյանին ու Մատուրյանին: Թումանյանը ունի մի շարք ժողովրդական երկեր՝ հերթաթիւեր ու առակներ, վոր վերաբերում են «բարձի ու շարի» խնդրին: Նրանց մի մասը միանգամայն շաղախված և մանր-բուրժուական իդէոլոգիայով: Մի երկու նմուշ: «Գառնիկ ախպերը-ում հաղթանակում և «բարին», չնայած «շարի» բոլոր արարքներին ու խաղերին.

Երկու վորբեր,  
բուր ու ախպեր,  
առած պատիվ, գահ ու թագ,  
աշխարհն ելի  
խաղանդ ու լի,  
շարը թաղված ծովի տակ:

«Վրսկի քաղաքը» կոչված հնդկական հերթաթիւմ խոսվում է երիտասարդութեան, երջանկութեան և սիրո զաւարտների մասին: Հերթաթիւ հերտար՝ Դիվանան երջան-

կանալուց հետո վերադառնում ե իր տունը, վոր «ցավե-  
րի տուն, արցունքի ծով» ե.

Տանում ե նա ուշք ոգու,  
Անվերջ սերը, անհատ բարին,  
Երջանկությունն ամեն մարդու,  
Սաղաղություն ողջ աշխարհին:

Ինչպես տեսնում եք, սա ե այստեղ մեր բանաստեղ-  
ծի «փիլիսոփայական» ըմբռնումը հանդես՝ կյանքի արհա-  
վիրքների ու ձախողությունների: Սա տիպիքական մանր-  
բուրժուական մորալ ե, որ նույնքան առաձգական ե,  
չափ ընդհանուր, ուստի ե անորոշ, անզեմ-ի՜նչպես ե ինքը  
մանր-բուրժուան: Այլ ե Թումանյանը իր մյուս հեքիաթ-  
ներում, վորտեղ նա, որինակ, հենց աշխատողի ու կեղե-  
քիչի պատկերն ե տալիս:


Շարունակենք: Թումանյանի հատորում կայ մի բա-  
վականին ձգձգված պոեմ՝ «Դեպի անհունը», վոր այնքան  
ել հեշտ չի կարգացվում: Մի շարք երկար խորհրդածու-  
թյուններ ե, վոր նա անում ե այնտեղ. խորհրդածու-  
թյունները համակված են պեսսիմիզմով. նրանք վերաբե-  
րում են կյանքին ե մարդուն՝

Կյանքը երազ ե, երազն ել մի կյանք,  
Երկուան ել անցվոր, երկուան ել պատրանք:  
Յեվ թե հաստատուն մի բան կա անմահ,  
Արդյոք իմաստուն հոգին չի՞ միայն նա...

Բանաստեղծը փիլիսոփայում ե հոգու ե ժամանակի  
մասին. նա անհունության զաղափարն ե աշխատում պաշտ-  
պանել.

Յեվ այսպես անվերջ այսօր ու երեկ  
Փոփոխվում են միայն, միշտ մնում ե մեկ -  
Մեկ մեծ ժամանակ: Այսպես ե հոգին...

Բացի հոգուց, հավիտենականությունից մնացյալը  
դատարկություն ե: Անհեթեթություն ե ե ինքը մարդը.  
հեղնանքով ե խոսում Թումանյանն այս մասին՝



Յեւ ինչ ե մարդը, և ինչ իրեն կյանք. —  
 Յեղծական ձեւեր, ձայներ, շարժումներ.  
 Հավերժականը չունի կերպարանք...

«Յեղծական ձեւեր»: Իսկ այլ բան ե հավերժականությունը: Կյանքը սին ե ու դատարկ, խեղճությունը և երջանկությունը ըստ բանաստեղծի գտնվում են ոչ թե աշտեղ, երկրի վրա, այլ «այնտեղ», այլ վայրում՝ «անհայտ» ու «անծանոթ» աշխարհում: Թողած «անցավոր աշխարհ», թքած մարդկային կյանքի վրա, Թումանյանը, միանգամայն անձնատուր լինելով հոսեցողության, աշխատում ե վերջիվերջո մի կերպ պոկ գալ իրականից՝ «Դեպի անհունը» գրված ե ըստ երևույթին ցույց տալու համար, որ միակ փրկությունը երեակայական անուշական մատուցաների մեջն ե. հոգին չի կարող ապրել այս հանցավոր կյանքում, և նա հեռանում ե այնտեղից.

Վերացավ, թռավ իմ վշտոտ հոգին  
 Դեպի երջանիկ մի ուրիշ աշխարհ,  
 Անհայտ ու հեռու, անծանոթ, ոտանք...  
 Յեւ այն աշխարհը հրաշալի եր.  
 Ոչ սուղ կար այնտեղ, ոչ վայելք, ոչ սեր,  
 Ոչ կարելի եր կորցնել մի բան  
 Յեւ ոչ ունենալ քաղց ազանության.

Սա ամբողջացյալ պետիմիզմ ե, որ իր ելքն ե գտնում: Սակայն նրանում կան տիպիքական գծեր՝ վա-  
 բանում, տարուբերում, ճապող բարոյախոսություն և առհասարակ մանր-բուրժուական ու քաղքենական անձե ու դժգույն «փիլիսոփայություն»: Այստեղ բանաստեղծը տալիս ե մեզ իր մեղմանականության կոլինտեստենցիան: Պետք ե ասած, որ Թումանյանը միշտ ել սիրահար ե եղած պետիմիստական խոհերի ու խորհրդածությունների. կյանքի վերջին որերին նա նույնիսկ սովորություն ե դարձնում արևելյան բանաստեղծների նման փիլիսոփայելը կյանքի, մարդու և մահի մասին: Նա ազդվել ե պարսիկ

բանաստեղծ Խաբանից, վորի քառյակներն թարգմանությունն և տպել՝

Անցա՛ քարը սրտիս վրա՝ ջրի պես.  
Մենակ տատասկ ու փուշ տարա, ջրի պես.  
Իմ աշխարհում հանգիստ չառա՛ ջրի պես,  
Ու գնացի, յետ չը դառայ՝ ջրի պես:

Այս ուղղությամբ 1922 թ. ամբանը նա տալիս է իր «Քառյակները», վորոնք անշուշտ հեռու են վերև բերված ճապող բարոյախոսությունից, սակայն կազմում են նրա անհրաժեշտ շարունակությունը: Այդ քառյակները բանաստեղծի հոգևտեսական ու «փիլիսոփայական» ներշնչումների կատարելագործությունն են ներկայացնում:

Աղբյուրները հնչում են ու անց կենում,  
Ծարավները տենչում են ու անց կենում,  
Ու երջանիկ ակունքներին երազուն  
Պոետները կանչում են ու անց կենում:

Կամ թե չե նայեցեք նրա «Սիրիուսի հրաժեշտը» բանաստեղծության՝

Բարի ճամփա, հյուրդ մեր հին...  
Յեվ թե տեսնես՝  
Մեզնից այսպես  
Մի հարցում տուր հզոր մահին:  
— Մարդու քանի՞  
Սերունդ կանի  
Մի հրաժեշտն աստեղային:

Կարծում չենք, վոր ավելի քան բավական է այլևս մեր բանաստեղծի ընդհանուր մեղջանականության մասին: Այսպես է նրա մանր-բյուրեղեական տրամադրությունների սաղմնավորումը, զարգացումը և արտահայտությունը:

Սա է իր ժամանակի ու միջավայրի ազդեցությունը Հ. Թումանյանի բանաստեղծության ընույթի վրա:

Այժմ դառնանք նրա մյուս կողմերին:



Թումանյանը նշանափոր դարձավ գլխավորապես հորհրդով իր պոեմների ու լեզենդների։ Այստեղ նա արգենդ գյուցազներգակ է, և ուժեղ ու կատարյալ գյուցազներգակ։ Նաճապետական գյուղը, հին-հին սովորույթները, պատմական վազեմի ժամանակները՝ սրանք են կազմում բանաստեղծի պոեմների նյութը։

Մեր գրականության քննադատներից փոմանք Թումանյանին համարում են հայկական հոմերոսը։ Սոսկ նմանողության տեսակետից թերևս սա ճիշտ է։ Յեվ իսկապես Թումանյանի այս տեսակ գրվածքները, շատ չնչին բացառությամբ, գուրկ են սուրբիեկտիվիզմից, նա որիեկտիվ կերպով տալիս է հայ նաճապետական գյուղի կերպարանքը։ Կարծես նաճապետական խոր ժամանակների ականատես պատմիչ լինի նա, որ այնպես վարպետորեն նկարում է «նոր կարգերից», կապիտալիզմից միանգամայն հեռու, նրանց հոտը շառած, իր լիակատար նաճապետական, ինքնամոտի կյանքով ապրող գյուղի պատկերը։ Անշուշտ, այդ գյուղը այսօր այլևս գոյություն չունի։ Նրա կենցաղից մնացել են բեկորներ, առանձին սովորույթներ և հիշողություններ։ Ինքը բանաստեղծը չի դիտել մինչև վերջը այդ գյուղի նարագոտ կերպարանքը. նա տեսած կը լինի նրան վարագույրի մի ծայրից միայն, նրա որոշ կողմերը։ Դա ցույց է տալիս, փոր հայ գյուղը, Լոռին՝ Թումանյանի որով՝ 80-ական և 90-ական թվականներին՝ եղել է իր նաճապետական կյանքի վերջին շրջանում, կանգնած նոր ժամանակների դրան շեմին։

Այսպես թե այնպես Թումանյանը նկարագրում է Հայաստանի լեռնային մասի, գլխավորապես խաչնարած հայ գյուղի, նաճապետական, լավ և տանք՝ նաճապետական-տոհմային իրականությունը։ Այդ իրականությունը, ինչպես ասացինք, տեսել է ինքը բանաստեղծը իր երիտասարդության օրերում։ Կարելի է համարձակ ասել, փոր

դա հայկական աշուղես կոչված միջնադարն եւ ի՞նչ ե նահապետական-տոհմային շրջանը հասարակությունների կյանքում:

Նահապետականությունը — դա պատմական մի ամբողջ շրջան եւ: Մարդկային խմբակցությունները կազմակերպվելիս են յեղել մի ժամանակ ցեղի, առնմի շրջանակներում, որոշ սխառեմով, վորի ղեկավարն ե հանդիսացել ավագը, նահապետը: Նահապետականությունը հատուկ ե ոչ թե միայն առանձին տոհմերին, այլեւ բնատանիքներին: «Միջին դարերում», ավատականության որով գյուղի տիպիքական կազմակերպությունը հասարակական կյանքում յեղել ե նահապետական բնատանիքը կամ համայնքը: Սակայն նահապետականության բնորոշիչ կողմը ոչ թե այդ ե միայն, այլ գլխավոր առմամբ նրա տնտեսական վորոշ կառուցվածքը:

Նահապետական տոհմը, համայնքը կամ բնատանիքը միանգամայն ինքնամփոփ մեծություններ են: Ամենայն ինչ ծագում ու մեծնում ե, արտադրվում ու սպառվում ե, հնանում ու սահմանափակվում ե տոհմով, համայնքով, բնատանիքով: Այդ միավորը կտրված ե արտաքին աշխարհից, նա զուտ տեղական նշանակություն ունի, անհատական ե ու խիստ կերպով սահմանավորված: Հասկանալի ե, վոր այդորինակ տնտեսությամբ ու կազմով ապրող գյուղական հասարակությունը միատարր ե: Մարքսիստական սոցիոլոգիայի լեզվով արտահայտված՝ դա նույնիսկ հասարակություն չե, քանի վոր այնտեղ չկան դասակարգեր: Տնտեսության բնական ձևը, կազմակերպության նահապետական կեղեր ե խմբակցության տոհմային կամ բնատանեկան կերպարանքն արդեն ինքնին բնորոշում են այդ «միջնադարյան» գյուղը, նրա սարերն ու ձորերը, նրա խաշնարած ժողովուրդը:

Դասակարգերի բացակայությունը չի նշանակում, ի հարկե, վոր այդորինակ գյուղը ապրում ե բարենպաստ ու երջանիկ որեր: Նա ունի իր բազմաթիվ խորհուրդ-

դությունները, բացասական կողմերն ու ցավերը: Մանավանդ իր կյանքի վերջին շրջանում, վորը և տեսել եմ երբանաստեղծը: Յե՛վ մանավանդ այն մոմենտին, յերբ նահապետական գյուղը կանգնած եր իր վախճանի դրան շեմքին, յերբ նրան այնուհետե հաջորդելու եր քայքայման, դասակարգային տարրալուծման և աղքատության եպոխան: Սրան ել և ականատես յեղել «Հոմերոս»-թումանյանը: Բայց և այնպես իր վորոշ գրվածքներում նա վերցրել և այդ նահապետական գյուղը այնպես, ինչպես նա կար մի ժամանակ: Այն ազդեցությունները, վոր կրել և բանաստեղծը իր վրա, իրանց շարքում պատմավոր ու խոշոր տեղ են տվել նախկին նահապետական-համայնական ու նահապետական-տոհմային հայ գյուղին: Այդ ել հենց բավական ե յեղել, վորպեսզի խոշոր բանաստեղծը զեղարվեստորեն ներկայացնի բնական, նահապետական, վաղեմի, անցած-գնացած հերոսների ու զների, քաջերի ու կտրիճների, նահապետների ու նանինների կյանքը, մեր ժամանակին անտվոր կողմերը, «աղաթը» եայլն, եայլն:

Թումանյանի հոմերոսականությունը սրանումն և կայանում: Նրա գրվածքները այս տեսակետից անմահ են. այն սերունդներ կը կարդան զեղարվեստական հաճույքով, մեծ հետաքրքրությամբ ու կատարյալ բավականությամբ: Բանաստեղծը գյուլցազներգակի իր ջիղը այսպես և ցույց տալիս.

Թռչում և հոգիս, թռչում գեպի տուն:

Ուր վոր հայրենի ոջաղի առաջ

Վաղմուց կարոտով սպասում են ինձ,

Ու ձմռան երկար գիշերը նստած՝

Խոսում են Լոռու հին-հին քաջերից:

Սա և «Անուշ» պոեմայի սկիզբը: Անուշն ու հովիվ Սարոն փոխադարձաբար սիրում են իրար: Սարերում ու ձորերում Անուշի ծնողներից զաղանի հանդիպումներ են նշանակում նրանք:

Հովիւն ասում է իր սիրունուն.

Քու հերն ու մերը թե վոր ինձ չտան,

Արին կթափիմ ես գետի նման,

Սարերը կընկնեմ կորչեմ անգլուման,

վոր միանգամայն բարբարոս ու անսովոր մեր ժամանակ-  
ներին մի գիմում է լեռնային գյուղի կտրիճի կողմից:  
Արյուն թափել, վրեժ լուծել հանուն «աղաթի», մի խոս-  
քով՝ արյան վրեժն է կազմում այս պոեմի նյութը: Բայց  
պոեմը հարուստ է իր բովանդակութեամբ: Նախապաշա-  
րուժների, անտախապաշտութեան և հափառալիքների մի  
կատարյալ կալեյդոսկոպ է տալիս նա: Անուշը իր կողմից  
զանգատվում է սիրահարից՝

Ասում են՝ ուռին

Աղջիկ եր ինձ պես,

Մ'նում եր եարին,

Ու չեկավ նա տես:

Խեղճը դողալով՝

Անյույս կոացավ,

Դարգից չորացավ,

Ուռենի դարձավ.

Բայց դառնանք բուն նյութին: Անուշը հափառում է  
Համբարձման որը հանված վիճակին՝ թե ինքը քամբախտ է:  
Յեւ, կարծես, իսկապես վոր: Գյուղում հարսանիք եւ Հավաք-  
ված են լեռնականները: Կատակի արված ընկերախաղի  
միջոցին Սարոն հաղթում է Անուշի եղբորը՝ Մոսուն, վոր  
նրա ընկերն է:

Աղաթ կա սակայն եղ մութ ձորերում,

Ու միշտ հնազանդ հնոց աղաթին,

Ամբոխի առջեւ իգիթն իր որում

Գետին չի գարկիլ ընկեր իգիթին:

Մոսին թշնամանում է Սարոյին. վիրավորված ու  
զայրացած՝ նա վոխ է պահում նրա դեմ: Մոսու համար  
առաջ է գալիս նամուզի հարցը: Նա վորոշում է իր վրե-

ժը հանել Սարոյից: Ամենից առաջ փորոշում ե, իր նամու-  
սը պահելու համար, քրոջը հեռացնել Սարոյից. այսպիսի  
«սիրալիր» խոսքեր ե շռայլում նա քրոջ հասցեին՝

Դե իմ անունով երգվիր, անդգամ,  
Վոր ել Սարոյին դու չես սիրելու,  
Թե չե՝ տեսնում ես խանչալը հանած՝  
Մինչև դատտակը սիրտդ եմ խրելու:

Սարոն փախցնում ե Անուշին: Լեռնցի երիտասարդ-  
ները գովում են նրա այդ արարքը: Ազդիկը հալալ ե Սա-  
րոյին, փորովհետեւ վերջինս փախցնելով նրան մեծ իզիթու-  
թյուն ե արել: Այդ ամենը Մոսուն հանդիստ չի տալիս:  
Նա իր խմբով սկսում ե հետապնդել հովվին: Անուշի փա-  
խուստից հետո շուտով խումբը վերադառնում ե, իսկ

Մենակ Անուշի եղբայրը—Մոսին  
Մնաց հանդերում, երգում կերավ նա,  
Ուր փոր ել լինին՝ նրանց միասին  
Գանի՝ կոտորի, սիրտը հովանա:

Ահա սա ե արյան վրեժը: Այն հանվում ե Սարոյից:  
Մոսին ընկնում ե նրա յետևից, զանում նրան ե զնդա-  
կահարում: Նա իսկույն ե եթ գյուղ ե վերադառնում  
մոտյլ ու համարձակ՝ ամբոխի առաջ կախում ե իր հրա-  
ցանը պատից. ոչ ոք ծպտուն չի հանում. ամենքը պա-  
պանձվել են: Այդպես ե սրենքը, այդպես ե «աղաթը».  
Իրավացի վրեժը ստացել ե իր հագուստը: Շնորհիվ այդ  
«աղաթի» փորոշվում ե ե Անուշի վիճակը. նա գժվում ու  
Դերեդն ե ընկնում.—

Վուշ-վուշ, Անուշ, վուշ-վուշ, քուրիկ,  
Վուշ քու սերին, քու եարին,  
Վուշ-վուշ, Սարո, վուշ-վուշ, իզիթ,  
Վուշ քու սիրած սարերին...

Ահա ե «Մարո»-ն: Իննը տարեկան Մարոն հոր պա-  
հանջով կին ե դառնում լեռնցի վիթխարի Կարոյին: Մա-  
րոն չի կարողանում նրա հետ ապրել. նա փախչում ե իր

ամուսնուց: Հայրը չի ընդունում նրան: Ամենից մերժ-  
ված մանկահասակ Մարոն, սոված ու պատառոտված՝ ան-  
տուններում թափառելուց հետո, ինքզինքը ձորն է գցում:

Ինքնասպանությունը և առհասարակ այդ վողջ ա-  
րարքը խայտառակութուն է համարվում նահապետական,  
վայրենարար ընտանիքի համար: Մեռած Մարոյին պատ-  
ժում են՝ նրան թաղում են գյուղից հեռու, դաշտում, «ա-  
ռանց ժամ ու պատարադի»:

Կնոջ գրությունը հայ լեռներում և նահապետական  
ընտանիքում շատ ծանր է. կինը այնտեղ լեզու ու բա-  
նականություն չունի. և չի ել կարող ունենալ: Ուստի  
հասկանալի է, թե ինչու «Անիծած հարսը» այսպիսի  
մտորումների մեջ է ընկնում՝

«Աշխարհքը բանտ,

Մեջը անբախտ

Ես մի գերի անխնդում.

Սիրուն շորեր,

Ջահել որեր

Ի՞նչ եմ անում ես բանտում»:

Մի ուրիշ պատկեր: Դա լուեցի Սարոն է: Նա աժ-  
դահա է: Թուժանյանի նահապետական հերոսները մի-մի  
հսկաներ, քաջեր ու աժդահաներ են: Առասպելների և  
գյուցազների երգիչը, լեռան սիրահարը, անգնդախոր Լո-  
ուս հայրենասերը այլ կերպ չի ել ներկայացնում իրան նա-  
հապետական, հինավուրց գյուղի բնակիչներին:

Թեկուզ և մենակ լինի փարախում,

Աժդահա Սարոն ընչից է վախում:

Այդպես է հովիվ Սարոն: Բայց նա և այլ է: Նա իր  
միջավայրի զավակն է, իսկ միջավայրը խափար է, լի  
նախապաշարումներով: Սարոն մենակ և մնացել ձորում.  
նրան խուլ գիշերին պատել են մտապատկերները.

Որտեղից որտեղ, են ձորի միջին,

Միան յեկան տառի գրույցները հին...

Միան եկան ու մեր Սարոն ականա

Սկսավ մտածել շարքերի վրա...

Նա խորանում է իր մտքերի մեջ: Յերեակայությունը ու ժգնորեն բանում է: Սարոն կորցնում է ուսուցականությունը և ամբողջապես տարվում է իլլյուզիաներով:

Չարքերը ընկած նրա ետևից,

Հերարձակ խմբով, ճիշդ-աղաղակով:

Սարոն զոհ է դառնում հավատալիքների, նրաչքների. հիվանդ յերեակայությունը լեռնականին, հակային վախ է ներշնչում. բնության զավակը բնության ուշիվների, իրա բնության դեմ ահ է գցում: Վախը նրան դուրս է բերում փարախից, տանում է գեպի անոռի խորխորատը և գցում է ձորե ձոր: Պապարի ու ազիտության զոհը խեղագարվում է:

Նահապետական գյուղացիք, լեռնականներ, խաշնարածներ, դրանք դեռ գտնվում յենն քրեական պատժի առաջին շրջանում՝ արյան վրեժն է դա, վոր տեղի է ունենում բոլորի աչքի առաջ, հանգիստ ու անխռով կերպով, փորպես սովորական ու որինական երևույթ: Այնտեղ կան բազմաթիվ նախապաշարունակներ, հատուկ՝ մարդու կիսավայրենի դրության: Մարդիկ այնտեղ պատուականներ են, կինը—անբան գործիր: Որոշողը վիճակն է, բախար, նախախնամությունը:

Թեև անձուկ շրջան, թերևս ոչ լիակատար պատկեր՝ այս ամենը տալիս է մեզ Թումանյանը, բայց, կրկնում ենք, վոչ միտումավոր կերպով, առանց տենդենցների, առանց վորեւ իդեալիզացիայի: Այնքան, որքան վերաբերում է նա խաշնարած ժողովրդի կուսական կացության ու կենցաղին, այն հիշեցնում է մեզ հին, հերոսական շրջանի երգիչների հնչած նոտերը, մանավանդ բանաստեղծը հաղորդել գիտե այդ ամենը հանգիստ, եպիքական ձևով, որպես անխռով ձերուկ—պատմիչ, գեղունակ երգիչ:

Եպիկ Թումանյանը բացի ժողովրդական պոեմներից ալել և և առասպելական վեպ: Նա և գյուցադներգակ և: Այստեղ ել նա լաշխատել և հարազատ մնալ ժողովրդին. թերևս հայկական եպոսն և այդպես թերադրել նրան: Այդ եպոսից նա վերցրել և «Սասունցի Դավիթը»:

Ալելի գնահատելի և Թումանյանի պատմական «Սասունցի Դավիթը». նրանում հայ կյանքի վաղեմի հետաքրքիր եջերից մեկն և բացվում մեր առաջ. և դա, կարելի և ասել, միանգամայն հաջողվել և Թումանյանին: Այս գրվածքը որոշ իմաստով տենդենցիոզ և Թումանյանի որոշ ձգտումները, դուրս եկած նրան ծնող իրականությունից, ցրտացել են այդ գրվածքում, թեև այն, ինչ վոր այդ ուղղությամբ տալիս և մեզ բանաստեղծը, անշուշտ հայանի և յեղել և Նին հայերին, տակավին մատաղ կյանքով ապրող և հասարակական շերտավորումների հոտը չառած այդ Նին հասարակության:

Սասունցի Դավիթը ժողովրդի մարդ և, նրա միջից դուրս յեկած, Նին ժողովրդի նման վեհանձն, միամիտ, պարզ ու բարեբարո. ուսմիկ հատկությունները, չնայած նրա ազնուագարմության, ամուր կերպով նստած են նրա մեջ: Գնում և Դավիթը Մսրա Մելիքի բանակը նրա հետ կովի բռնվելու. նրան ասում են, վոր Մելիքը եթ ռովա քնի և մտել. գայրանում և Դավիթը.

— Ի՜նչ, բերել և աղբաս ու խեղճ

Խալխին լցրել ծովն արշունի,,

Ի՜նքը մտել վրանի մեջ,

Որտը որով հանդիստ քրնի...

Այստեղ հասարակ ժողովրդի ցավակիցն և խոսողը:

Բայց լսեցեք Դավթին կովից հետո: Ռամիկը շարունակում և նրա մեջ խոսել. հոխորտանք չունի նա, այլ տարված և մի մաքով—նստակյաց, հողագործ ժողովրդի հոգսերով, վորը փոխանակ դուրս գալու իր շրջաններից, պետք և ըստ Դավթի իմանա իր սրբազան գործն ու

պարտականությունը՝ աշխատանքի դաշան ու գյուղացու  
քրտինքը: Մտրա Մելիքին հաղթած Դավիթը, փոխանակ  
հետապնդելու նրա զորքին, դուրս ե գալիս հրապարակ և  
մի, յեթե կարելի ե այսպես արտահայտել, աշխատա-  
վորական ճառ ե ասում իր թշնամիներին.

Դուք ըռանշար մարդիկ, ասավ,  
Զուրկ ու խափար, քաղցած ու մերկ,  
Հազար ու մի կրակ ու ցավ,  
Հազար ու մի հոգսեր ունեք.

Ի՞նչ եք առել նեւ ու աղեղ,  
Յեկել թափվել ստար դաշտեր.  
Ձե՛ վոր մենք ել ունենք սուն, տեղ,  
Մենք ել ունենք մանուկ ու ծեր...

Զանձրացել եք խաղաղ ու հաշտ  
Հողագործի որ ու կյանքից,  
Թե՛ զգոււել եք ձեր հանդ ու դաշտ,  
Զեր հունձ ու փունջ վար ու ցանքից...  
Դարձեք յեկած ճանապարհով  
Զեր հայրենի հողը Մըսրա...

Այսպիսի նկարագիր ե տալիս Դավիթին բանաստեղծը:  
Արանով նա վտար ե դնում սոցիալական գրականության  
պարանգը:



Թումանյանը թողել ե բավականին թվով առակներ  
ու հեքիաթներ, վորոնք մեծ և արժանի ժողովրդականու-  
թյուն են վայելում: Ինչպես «Սասունցի Դավիթը» որոշ  
չափով, այնպես և նրանք մեծ մասամբ համակված են  
գեմոկրատիզմով: Մի այլ հոգվածուժն ցույց ե տրված  
Հովհաննիսյանի ու Մատուրյանի գեմոկրատիզմը: Հայ  
գրականության համար գեմոկրատական ջիղը թերևս սո-  
վորական բան ե, քանի վոր հայ ժողովրդի նման մանր

ու հալածական, նահապետական ու գյուղացիական հատ-  
վածք անհրաժեշտորեն տարված երկինելու գեմոկրատա-  
կան տարրերի հակումներով, իհարկե, վորոշ շափով և վո-  
րոշ աստիճան: Դեմոկրատիզմ հասկացողությունը ինքը  
տարրերը գունավորումներ ունի: Կա գեմոկրատիզմ բան-  
վորական կամ պրոլետարական: Կա գեմոկրատիզմ բուր-  
ժուական: Վերջինս ունի յերկու գույն՝ կա կապիտա-  
լիստական բուրժուազիայի կամ լիբերալ գեմոկրատիզմ,  
կա և մանր-բուրժուական կամ սովորական, «մաքուր»  
գեմոկրատիզմ: Դա, ուրիշ խոսքով, աշխատավորական գե-  
մոկրատիզմն է իր զրական արտայայտութեամբ:

Թուամայանը, ըստ յերևույթին, թերթում և սրա  
կողմը: Նրա համարյա բոլոր առակներն ու հեքիաթները  
և մի քանի ոտանավորները շաղախված են մանր-բուր-  
ժուական գեմոկրատիզմով: Այնտեղ բանաստեղծի համա-  
կրությունը աշխատավոր գյուղացու, արհեստավորի կողմն  
է: Այդ զրվածքները, անպայման, սոցիալական բնույթ  
են կրում:

Թուամայանի սոցիալական երկերը մենք երկու մա-  
սի ենք բաժանում: Մեկը կազմում են «Զարի վերջը»,  
«Հսկան», «Մի կաթիլ մեղրը և «Քաջ Նազարը», սրան-  
ցում կայ ավելի ընդհանուր, ունիվերսալ գաղափար: Մյուսն  
է՝ «Գութանի երգը», «Տերն ու Ծառան», «Գիգորը»,  
վորոնք արտաբերում են քայքայված գյուղացու, պրոլե-  
տարացման դուռը բաղխող շինականի վատթար դրու-  
թյունը:

Այդ երկերը զրված են մասամբ առակի, մասամբ ել  
հեքիաթի ձևով: Զնայած նրանց մի քանի սլակասություն-  
ներին, հենց գաստիարակչական տեսակետից, այնուամե-  
նայնիվ, վորպես մանկական և զիզակտիկական զրվածք-  
ներ, նրանք անհամեմատ խոշոր նշանակություն ունին:  
Նրանցում Թուամայանը հանդես է գալիս վորոշ շափով  
վորպես աշխատավորական զրոգ: Յեվ իզուր չէ, վոր մեր  
մանուկները, աշխատավորներից շատ շատերը համակրան-

քով են խոսում բանաստեղծի մասին: Թիֆլիզում № 10 մանկատանը ամփոփված վորքերի ձեռքով հրատարակվում է հեկտոգրաֆիական «Юная Коммуна» անունով մանկական ամսաթերթ, վորի այս տարվա ապրիլյան համարի առաջին (հայերեն լեզվով գրված) հոդվածը նվիրված է Թումանյանի հիշատակին: Փոքրիկ հոդվածագիրն այնպեղ ասում է. «Նա մանուկների միակ մեծ ուսուցիչն է իր հիանալի գրվածքներով և նա դեռ շատ յերկար տարիներ կը մնա անմոռանալի մանկական աշխարհում: Թումանյանը երգիչ է նաև աշխատավոր ժողովրդի, նա արտահայտիչն է գյուղացու նիստ ու կացին»: Այսպես և բմբռնում Թումանյանին փոքրիկ ու գրկված որբը:

Թումանյանին գրադեցնում է կյանքի չարությունը: Մարդիկ իրար ծեծում են, ուսում ու ոչնչացնում: Սա կեանքի մեծ շարիքն է: «Չարի վերջը» առակում դուրս է բերված աղվեսը, որ գրադված է միամիտ կկուռի ձագուկներին ոչնչացնելով: Ազոավը ողնութեան և համնում կկուռն և սովորացնում է նրան ազատվել խորամանկ աղվեսից: Վերջինս վորոշում է իր վրեժը հանել ազոավից. քնած ձևանալով՝ իր կողքից թռչող ազոավին նա բռնում է: Ազոավն ել պահաս հնարամիտ չե. վորսի վայրերին ծանոթացնելու պատրուակով նա տանում գցում է աղվեսին շան բույնը: Շունը խեղդում է աղվեսին: Խեղդվող աղվեսին ազատված ազոավը բացականչում է.

Չարի առջեվ թե վազ, թե ուշ,

եւո է պահված, Աղվես աղա.

Նույն նյութն է շոշափում և «Հսկան»: Մարդկանց մեջ կա շարություն, ուրիշներին փնտս հացնելու հատկություն, անմեղներին դիպչելու սովորություն: Այդպես է մտածում բանաստեղծը: Խաղաղ հսկայի դեմ գրկում է իր զորքերը դռնող իշխանը: Քնած հսկայի մի շարժումից իշխանի զորքերը տակնուվրա են լինում. վողջ մնացածներին վեհանձն հսկան ազատ բաց է թողնում:

Իշխանները, թագավորները և «մեծերը» պատերազ-

մով է, որ ապրում են: Պատերազմը խոշոր չարիք է ու պատուհաս: Այս հարցին Թումանյանը շատ եղեր է նվիրել: «Մի կաթիլ մեղրը» այդ տեսակետից կլասիքական գրվածք է: Ըստ նախամտածված ծրագրի նա պարունակում է իր մեջ հիպերբոլիզմ, սակայն դա չի խանգարում, Վորպենի հեքիաթը լինի գեղարվեստական, հետաքրքիր, իրերինակ և ուսանելի: Յանուսյանի մեղրի կաթիլի վրա ճանճ է նստում. դեպի ճանճը նետվում է կատուն, կատվի վրա է հարձակվում շորանի շունը: Յանուսյանը ողնաթիջան է հասնում իր կատվին, իսկ շորանը՝ իր շանը: Մի լավ տուրուղմրոց է սկսվում: Դրանք երկու գյուղի բնակիչներ են: Հարայ-հրոցի վրա գյուղերը դուրս են գալիս իրար դեմ: Գյուղերը պատկանում են երկու տարբեր պետությունների, որոնք այդպիսով ստիպված են լինում իրար կռիվ հայտարարել:

Ու սկսվեց կռիվն ահեղ:

Ամառ, ձմեռ,

Վոզջ տարիներ

Մշակն՝ անբան,

Դաշտերն՝ անցան:

Սա է ցույց տալիս հեքիաթը: Դա մի ծաղր է պատերազմի և իշխողների հասցեին. դա ցավակցություն է՝ գյուղացուն ու մշակին:

Բայց ավելի մեծ ու տաղանդավոր ծաղր է «Դաջ Նազարը» կոչված հեքիաթը:

Թշվառական, անշնորհ, հիմար ու վախկոտ Նազարը շնորհիվ իր տխմարություն, սարսափելի վախկոտություն և ալարկոտություն քաջ է դառնում և թագավորության է հասնում: Բանաստեղծը վերջացնում է.

«Ասում են մինչև ես որ ել դեռ ապրում ու թագավորում է Դաջ Նազարը: Ու՛ երբ քաջությունից, խելքից, հանճարից մոտը խոսք են գցում՝ ծիծաղում է ու ասում.

— Ի՜նչ քաջություն, ի՜նչ խելք, ի՜նչ հանճար. դա-

տարկ բաներ են բոլորը: Բանը մարդուս բախտն է: Բախտ ունենա—քեֆ արա...

Յեւ վասուժմ են, մինչև ես որ ել քեֆ ե անում Բաջ նազարը ու ծիծաղում ե աշխարհքի վրա»:

Թումանյանի հեքիաթների մեջ «Բաջ նազարը» խոշորագույնը, ամենատաղանդավորը և հասարակության դատախարակության տեսակետից ամենաուսանելին է: Հումորը, ծաղրը և բուրժուական տիրող կարգերի երեսին շարժած արհամարհանքը միանգամայն սուր են ու խայթիչ: Իշխողները հավակնոտ հիմարներ են, ժողովուրդները՝ խավարապատ: Տիրողներն ու թագավորները ծաղրում են վողջ աշխարհը:

Դասանք Թումանյանի՝ այսպես ասած, դատակարգային կամ աշխատավորական վողով գրվածքներին: Նրա «Գութանի երգը» հայանի է դեռ 80-ական թվականների վերջերից: Խեղճ ու քաղցած, տնանկ ու աղքատ հայ գյուղացու «հորովին» և տալիս այնտեղ մեր բանաստեղծը: Յերգը տրամադրող է: Սակայն աշխատավորական տենդենցի տեսակետից ավելի արժեքավոր են նրա մի քանի պատմվածքները, վոր վերաբերում են նոր ժամանակների գյուղին:

Սա նահապետական աշխարհը չէ: Այնտեղ կան հարուստ և աղքատ գյուղացիներ: Անցման շրջանն է: Հասարակական միորինակությունը տեղի ե տվել աշխատարության: Առաջ են եկել հարուստ ու խոշոր սեփականատիրությունը մի կողմից և վտիտ, մանր ու բայրայվող անտեսությունները մյուս կողմից: Սա արտահայտիչն է 90-ական թվականների վերջին և XX-րդ դարու առաջին տարիների: Այս իրականությունն էլ ե տեսել Թումանյանը: Սրան էլ ե պատասխանել նա: Կյանքի զարմանալի զիալեկտիքայով բանաստեղծը արձագանք ե տվել երկու տարբեր, սակայն իրար հաջորդող կարգերին՝ նահապետական—բնական և կապիտալիստական—վողային: Առա-

ջինք աւանդեր արդեն: Սակայն խնշ կշռաշափով և մտահուռ նա երկրորդին:

Ահա «Տեքն ու Մատան»: Գյուղական բուրժուազիայի և բնչապուրկ գյուղացութեան կոխն և, վոր պատկերացնում և թումանյանը: Հարուստ գյուղացին խորամանկ և, նա գիտե, թե ինչպէս պետք և շահագործել: Ազգատ գյուղացին բնկնում և վորսպայթը, լսով շահագործվում, հետ ևլ մի բան պարտ և մնում հարստին: Այն ժամանակ ազգատի փոքր եղբայրը ամաղի փափաքեն վրեժը հանելու համար (իմա՝ շահագործութեան դեմ կռիւլու) գնում-վարձվում և նույն հարստին: Սա ալլեւ չի կարողանում խաբել ազգատութեան այս ներկայացուցչին. շահագործողը գանում և արժանի պատիժը: Այս անգամ հաղթում և ազգատը՝ գիմաղրելով հարստի ճնշման, ջրնջելով եղբոր պարտքը և հարստից ևլ տուգանք ստանալով: Անշուշտ, չկա այստեղ գառակարգային հասակ շերտավորում, գառակարգային կոխ և գառակարգային գիտակցութեան: Այդ չի կարելի պահանջել իսկ. սակայն նշանակալիցն այն և, վոր մեր բանաստեղծի մոտ գյուղը արդեն կանգնած և գառակարգային շերտավորման ճանապարհի վրա, այնտեղ կա շահագործում, կա պայքար գյուղացիական երկու տարրեր տարրերի միջև: Կոխը շահագործման դեմ տեղի և բռնկնում ոչ թե պրոլետարիատին հատուկ միջոցներով, այլ ինքնորինակ ձևով: Ընդհանուր աշխատավորական շարժման, գյուղական բնչագրկութեան, գառակարգային պայքարի սողմային, անկեպարան գրութեան պատկերն և տալիս «Տեքն ու Մատան»:

Ավելի պարզ և վորսշակի և այս դեպքում բանաստեղծի շատ հայանի և միանգամայն ժողովրդականացած «Գիբորը»: Ավելորդ և նրա բովանդակութեան վրա կանդատնելը: Ետեանն այն և, վոր «Գիբորը» ցույց և տալիս հայ գյուղի երեսը: Գյուղացին քաղցած և ու քաղքաղված: Գյուղում կան պրոլետարականացած շերտեր, բնասնիրներ, որոնք այնտեղ հաց ճարել չեն կարողանում: Մյուս

կողմում կան մեծ քաղաքներ, որտեղ հնարավոր է կռակել վաստակել և դրանով գյուղում կերակրել ընտանիքը։ Իր փոքրիկ գավաղին սնանկ գյուղացին տալիս և մեծ քաղաքում վաճառական դարձած աղքատիկ մոտ ծառայության՝ վորպես «աշկերա»։ Բացի ձեռից, արհամարհանքից, վիրավորանքից ու քաղցից՝ փոքրիկ «Գիբորը» քաղաքի աղքատիկ մոտ վռչինչ չի տեսնում։ Շնորհիվ իր թշվառ կացության նա մրտում և անտանելի պայմաններում մեռնում է։ Թշվառ գյուղացին զրկվում և իր վերջին հույսից, որին նա այնքան հավատով «ի քաղաքն թիֆլիզ» գրում էր. «Ահա սիրելի որդի Գիբոր, ահա իմացած լինես, որ տեղներս շատ նեղ ու խարժր սաստիկ ուղում են և փող չենք ճարում, և Հանն ու Զանին տրվոր են... մի քանի մանեթ փող դարգի... Ծաղիկը (կովր) սասկեց»։

«Գիբորը» հայկական սոցիալական, աշխատավորական ու նույն խոկ բանվորական (ի բաց առյալ Զարենցի հեղափոխական կերտվածները) բոլոր զրկածքներից ամենատուժեղը, ամենաարտադակալիցը և ամենաշնորհալին է։ «Գիբորը» շատ նշանակալից և անպայման խոշոր գործ է։

Յեւ սրանումն և Թումանյանի արժանիքը, վորպես մի հեղինակի, վորը պատկերել և մեծ թափով հայ կյանքի գիֆիերենցիացիայի առաջին շրջանի այս կամ այն յեկեղը։

Այս հատվածում մենք քանիցս գործածեցինք բնդհանուր նշանակություն ունեցող բառեր՝ սոցիալական, դեմոկրատիզմ, աշխատավորական։ Բացատրենք այդ։ Սոցիալական գրականությունն առելով պետք և հատկանալ այն, վոր գրականությունը վորոշ շրջանում առնում և սոցիալական տարրերումների հոտը, զգում և գասակարգային բաղիտումները։ Բուրժուական գրականությունը սովորաբար արտացոլում և շահագործող գասակարգի նիստ ու կացը, միտքն ու արամադրությունը, ցանկություններն ու ձգտումները։ Նրա համար գոյություն չու-

նի աղքատութիւն, տանջանք ու սոցիալական պայքար-  
նորագույն ժամանակները միայն ծնում չեն դասակար-  
գային հակամարտութեան ջերմոցում ազդեցութեամբ սո-  
ցիալական գրականութիւն, վոր գեռ չի նշանակում հրա-  
տակ դասակարգային կամ պրոլետարական գրականու-  
թիւնը:

Դեմոկրատիզմը հայ գրականութեան մեջ վորոշ զիծ  
և մի շարք գրողներ կրում են նրա կնիքը: Պարզ և, վոր  
հայ մանր բնութագրական կյանքը, գյուղացիական բովում  
անված հայ գրականութիւնը, բաղբնու հետ կապված  
հայ գիրը, այն եւ հայ ժողովրդի բացառիկ պայմաններում  
ունենալու եր դեմոկրատական գրող: Դեմոկրատիզմը,  
ընդհանուր առմամբ, առկալին որոշող մոմենտ չէ: Գրչ-  
խավորը բովանդակութեանն և, հասարակական պարունա-  
կութեանը: Ի գեպ, դեմոկրատիզմը բուրժուական հասա-  
րակութեան ծոցում նշանակում և թերում գեպի նրա ստու-  
րին խավերը, լայն մասսաները: Յեւ միայն:

Այլ բան և աշխատավորականութիւնը գրակա-  
նութեան մեջ: Այդ բառի առկ պետք և բմբնել  
առհասարակ աշխատավորութեան պաշտպանութիւնը:  
Աշխատավորը դա մանր գյուղացիական տարրն և,  
աշխատավոր գյուղացիութիւնը և արհեստավորութիւ-  
նը. դա ալիլի լայն կատեգորիա և, բան պրոլետա-  
րիատը, ալիլի առաջնական, ընդհանուր և ճաղաղ: Աշ-  
խատավորական երկը յեւում և աշխատավոր ու շահա-  
գործիւ «մանր-մարդու», մանրիկ սեփականատիրոջ,  
պրոլետարացման ճանապարհի վրա կանգնած դասի գրու-  
թիւնից, ձգտումներից: Աշխատավորութիւնը համարու-  
մակ և և անձե, այդ պատճառով հաճախ ասում ու կրի-  
նում են՝ աշխատավոր, ծառա, աղքատ, մշակ. պրոլե-  
տարը և բանավորութիւնը ալիլի ջինջ, անպայման միա-  
տարը և դուռ դասակարգային կատեգորիաներ են: Բայց  
և այնպէս, աշխատավորին յերգող, աշխատավորի կյանքն  
ու տենչանքները ցուցադրող հեղինակը կանգնած և բուր-

ժուական կարգերի, կապիտալի և շահագործման հանդեպ, նրա համակրանքը շահագործվող «մանր-մարդու» կողմն է:

Քուժանյանի այս հասկացում բերված երկերը պատկանում են օպերայականների դասին: Նրանք ցույց չեն տալիս բանաստեղծի գեղեցիկագույնը: Այնպիսի, նրանք աշխատավորական են, նրանք ծաղրում են հարստին և խառնավորին ու տալիս են աշխատանքով և քաղցի սրերը տալիս մարդու պատկերը: Այս տեսակետից նրանք անպայման գրական յերևույթ են ներկայացնում և հայ բուրժուական գրականության ծայրում բացառիկ դիրք չեն գրավում, դեր չեն խաղում:

#### Ամփոփենք:

Վերն և Հ. Քուժանյանի հասարակական նշանակությունը:

Հայ բուրժուականության ստանալիքական եզրմասն տեղի տվեց նրա լուր սրերին: Այս շրջանում հայկական ինտելիգենցիան իր ճնշող մեծամասնությունով շարժական, մանր-բուրժուական ու քաղքենական էր. նրա այս հասկացվածքները շաղախված էին նացիոնալիզմով, բուրժուական հայրենասիրություն, քաղքենական յուզեր հափառություն, ճշմարտություն և բարձր մտքին, ցատում՝ դեպի «չարը», «անարդարություն», իսկ հայկական դժբախտությունների հանդեպ, կրում և հուսահատություն: Սա էր իրականությունը մինչև XX դարը, մինչև բանվորական շարժման օպոնավորումը հայ կյանքում:

Որպես լիբեր, Քուժանյանը վարակից նրանից և բնականորեն առմամբ անցավ այդ շրջան:

Եւայց և աշխուհ, նա կարողացավ մեկուսանալ և խորատուգվել հայ եզրին, հայի նահապետականության խորքերը: Այս բանում նրան ողնեց գյուղը՝ փակված, խույ, ինքնամոխի ու հին գյուղը՝ բաշխելով, ավաղ-

ներով և պատկառանքով լի՝ յերկյուղած, համատացյալ ու անտախտաշտ՝ հրաշքներով, հրաշալիքներով ու կիսավայրենի եակներով հարուստ՝ լուս ու մուշ ու միապաղպղ գյուղր։ Հայ նահապետականությունը և գյուցացներգությունը Թումանյանին դարձրին խոշորագույն գրող։

Այսպես և եպիի Թումանյանը։ Նրա ամենատուժեղ և հատկանշական կողմն այս և։

Նա Ժամանակները բնականորեն ներշնչեցին բանաստեղծին գեմոկրատական ու աշխատաւորական մտաւիներ։ Նա տեսաւ գյուղի բայքայումը, գյուղացու տանջանքները, նկատեց հարստին ու ազրատին, հիշեց կյանքի խորգուբորգությունները, արհաւիրքները և պատերազմները։

Պրոգետարիատին նա հաղորդակից չեղաւ։ Նրա աշխատաւորականությունը անշուշտ սրիմեաւի և, փոշ մարտնչող, գալուկ ու ճապող գա, այսպես ասած, արտագասակարգչին, գյուղացիական շինականի, մանր հողատարծի ուամիւլարականությունն և։ Իսկ բանաստեղծի կոիւր պատերազմի և արյունհեղության գեմ շաղախաւ և սուփորական պացիֆիզմով։

Այս բոլորը այսպես, սակայն փորպես սոցիալական ու ժողովրդական գրող՝ Թումանյանը, մաշերով անցման չրջանը, հին գասակարգերի բայքայման և նորի ժաղման եպիսան, անցներով հայ գրականության հին շիւղայից, անխուսափելիորեն բմբանեց հին կարգերի բացասականությունը և բնագոթեն, կարծես, համակիր դարձաւ կաղմալուծիւղ մանր-մարդուն, ցաւակցեց նրան, յերգեց նրա ցաւերը։ Այս տեսակեաից անպայման գնահատելի են և գաստիարակչական՝ նրա ժողովրդական գրաւծքները։

Վերջին ժամանակներս Թումանյանը ավեց յերկու գրական բողոք՝ նամակ գաշնակցական փետրաւարյան աւփանոյութայի գեմ ուղղած և «Մովից վատթարը» հոգաւծը, փոր խորագանում և Վոլգայի սովի տաիթաւ բրբջացոյ հակահեղափոխականներին։

Այսպիսի գարաուզի և հակասական ճանապարհներով և անցել բանաստեղծը: Նրա այդ գարգացումը հեռանք և այն իրականություն և շրջանի, վոր առաջ են ընկել ու անուցել են նրան: Կյանքի եվոլյուցիան տալիս և բանաստեղծության գարգացումը: Թուժանյանը անցման եպոխտի զրոզ և: Հին շենը, ծաղկոզ քաղաքը, քայքայվոզ գյուղը, խոշորագուն պատերազմներ, ազգային շարժումներ, քաղաքական ահաւի բազխումներ, աշխատաւոր գյուղացին, ծնւոզ կապիտալիստը, բանվորը և հեղափոխության ծագումը՝ ահա յերեսույթներին շարանը, վոր դիալեկտիքորեն հաջորդում են իրար, խառնվում են իրար, հակասում են իրար, սակայն վերջիվերջո տալիս են կյանքի այնպիսի պատկերներ, վորոնք բնորոշում են այդ շրջանի բնդհանուր կերպարանքը: Անշուշտ, այդ եպոխտն 20—25 տարիներին ժամանակամիջոց և, որին անմիջապես կցվում և ուստական առաջին հեղափոխության տառնամայիլը՝ իր գանազան յեկեկջներով. բայց և այնպես այդ երկար ու ձիգ տարիների ընթացքում Թուժանյանին բնարը կարողացել և արձագանքել իրադարձությունների եական ու մասսայական կոզմերին, ժամանակի համեմատաբար դրական յերեսույթներին:

Ի դեպ, պետք և նկատել և մի բան:

Ոմանք Թուժանյանին գարձնում են անվերապահորեն աշխատանքին, ադրատ գյուղացության յերգիշ, թերևս և բանվորագյուղացիական բանաստեղծ: Չափադանցություն և: Նույնպես չեն գնահատում բատ արժանույն, յերբ ոմանք ել նրան համարում են անցյալի ու հնի զրոզ, վորը իրը թե շուտով կը մոռացվի:


Թուժանյանի արժանիքը նրանումն և, վոր նա իր մեծ սարանկով ծառայեց աշխատաւոր գյուղին և հաւաքաւորեն սվեց կուսական-նահապեւական կյանքի պատկերը: Սա և գրականը: Սա և, վոր Թուժանյանին

դարձնում և մինչայսօրյա հայ գրականության խոշորագույն դեմքը:

Նրան կը հարգանք յերկար տարիներ: Ազագա սերունդները նրան կը սիրեն շատ ժամանակ:

30 ապրիլ 1923 թ.

ԹԻՓԻԳ.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



220029637

1n304

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊ. ՉԵՐԿ

29637

1261  
130